ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

28 նոյեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

166
(3016)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔՊ ՂԵԿԱՎԱՐԸ ԹՄՐԱՆՅՈՒԹԻ ՄԵԿ ԹԵՍՏ Է ՀԱՆՁՆԵԼ

Գյումրու քաղաքապետի՝ ՔՊ-ի կողմից չեղարկված թեկնածու, ԱԺ պատգամավոր Կարեն Սարուխանյանը թեեւ հրապարակեց իր կողմից հանձնված թմրանյութի թեստի արդյունքները՝ հայտարարելով, թե թմրամոլ չէ, բայց մասնագետները պնդում են, որ արյան եւ մազի միջոցով արված հետազոտությունները առավել հավատարժան են, քան մեզի թեստի տվյալները:

Եվ այսպես, հաստատելով «Ժողովուրդ» օրաթերթի կողմից արված բացահայտումը՝ ՔՊ-ական Կարեն Սարուխանյանը հանրայնացրեց թմրանյութի թեստի իր արդյունքները: Նա, նոյեմբերի 12-ին կայացած ՔՊ վարչության նիստից հետո, մեզի թունաքիմիական հետազոտություն է անցել եւ հրապարակեց, որ 20 հետազոտություններից 1-ն է դրական եկել՝ բարբիտուարները, որոնք կան կատվախոտի թուրմի մեջ (валерьянка), կարվալոլի եւ այլն:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել «Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի» տնօրեն Սուրեն Նազինյանի հետ՝ հասկանալու՝ արդյոք միայն մեզի միջոցով արված հետազոտությունը արտացոլում է ողջ իրականությունը՝ մարդը թմրանյութ գտագործել է, թե ոչ: Մասնագետը «Ժողովուրդ» օրաթերթին բացատրեց, որ տարբեր թեստեր գոյություն ունեն. «Հերոինի դեպքում՝ մի թեստ, կոկաինի դեպքում՝ մեկ այլ թեստ, բարբիտուարների դեպքում՝ մեկ ուրիշը, բայց գոյություն ունեն ավելի առաջատար՝ ավելի ապացուցողական մեթոդներ, որոնք իրականացվում են ավելի լրջագույն միջոցներով: Թեստեր կարող են բոլորը ձեռք բերել եւ հետազոտել: Թեստերով հետազոտում են միայն մարդու մեզը: Իսկ, օրինակ, քննչական մարմինները, նախաքննական մարմինները իրենց որոշումներով մեզ մոտ հետազոտությունների են նշանակում մարդկանց, որոնց կասկածում են թմրամիջոց օգտագործելու համար, եւ այդ դեպքում վաղեմության ժամկետի պատճառով մեզնից պահանջում են, օրինակ, մազի մեջ հայտնաբերել ինչ-որ բան», - «Ժողովուրդ» օրաթերթին մանրամասնեց Նազինյանը: Հետաքրքրվեցինք՝ ո՞ր մեթոդի միջոցով է հնարավոր մարդու օրգանիզմում ճշգրտորեն հայտնաբերել թմրանյութի հետքեր, մեզի՞, մազի՞, թե՞ արյան միջոցով, ինչին ի պատասխան՝ Նազինյանը ասաց. «Արյան միջոցով հնարավոր է, բայց արյան միջոցով չի արվում: Ինչո՞ւ, որովհետեւ մեզով կամ մազով հնարավոր է անել: Արյունով ստուգելը հնացած է, բայց էլի արվում է, - ասաց «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն»-ի տնօրեն Սուրեն Նազինյանը:

Այսինքն՝ քննչական մարմինները համարում են, որ ամեն դեպքում արյան եւ մազի միջոցով հնարավոր է առավել ճշգրիտ ստուգել՝ մարդն օգտագործե՞լ է թմրանյութ, թե՞ ոչ, քանի որ արյան, մազի մեջ թմրանյութը ավելի երկար է մնում, քան մեզի, որտեղից շուտ է մաքրվում: Այնպես որ, Կարեն Սարուխանյանը, թերեւս, պետք է կրկնի թմրանյութի հետազոտությունը:

ՔՊ-ական պատգամավոր, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը գտել է իր պաշտոնը պահելու ձեւը. ճգճգում է 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցի հրապարակումը, որն ամիսներ շարունակ հայտարարում է, թե պատրաստ է, բայց զեկույցն այդպես էլ չի հանրայնացվում: Հանրային հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Անդրանիկ Քոչարյանը դեռ սեպտեմբերին հայտարարել էր՝ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովն ավարտել է աշխատանքները, եզրակացությունը պատրաստ է, արդեն հոկտեմբերին նամակով դիմելու է ԱԺ նախագահին՝ դռնփակ նիստ հրավիրելու համար, որի ժամանակ էլ կներկայացվի «մի քանի հարյուր էջից բաղկացած զեկույցը»: Իսկ նոյեմբերի 11-ին էլ ԱԺ-ում լրագրողների հետ զրույցի ժամանակ հայտարարել էր՝ «Զեկույցը, որպես այդպիսին, պատրաստ է: Շատ էջեր կան, միայն տեսաձայնագրությունները վերծանելը հսկայական աշխատանք է, որը նույնպես ավարտված է: Հանրությունը դեռ տեղյակ չէ, թե զեկույցի որ մասը փակ կլինի, որ մասը կհրապարակվի, բայց Ազգային ժողովի լիագումար նիստերի դահլիճում այն ամբողջությամբ կհրապարակվի»,- նշեց Քոչարյանը: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնապես տեղեկացավ, որ ԱԺ նախագահը մինչ օրս 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի զեկույցը քննարկելու օրակարգով ԱԺ փակ նիստ հրավիրելու դիմում չի ստացել Անդրանիկ Քոչարյանից. նա ճգճգում է եւ չի ուղարկում դիմումը: Իսկ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, որ պարտավոր է ԱԺ բնականոն գործունեությունն ապահովել եւ բոլոր ժամկետները պահպանել, չի կարողանում Անդրանիկ Քոչարյանին բերել օրինականության դաշտ: Քոչարյանը «օրենքից վեր» է:



Արծրուն Հովհաննիսյանը ՊՆ-ում կրկին աշխատանքի է անցել: 2020 թվականի պատերազմից հետո ՀՀ պաշտպանության նախարարությունից դուրս եկած եւ երկար ժամանակ անգործ մնացած Արծրուն Հովհաննիսյանը տեղավորվել էր ՀՀ ԱԺ պաշտպանության հանձնաժողովում՝ որպես փորձագետ: Արծրուն Հովհաննիսյանին Անդրանիկ Քոչարյանը հանձնարարություններ էր տալիս, նա կատարում էր: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ արդեն մեկ տարի է, ինչ Արծրուն Հովհաննիսյանը դադարեցրել է աշխատանքն ԱԺ պաշտպանության հանձնաժողովում: Ինչպես ինքը նշեց «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, վերադարձել է ծառայության ՀՀ ՊՆ-ում, իսկ թե որ ոլորտում՝ չմանրամասնեց:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ դատական համակարգում լուրեր են պտտվում, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի հրաժարականից հետո ԲԴԽ հաջորդ անդամը, որը կլքի կառույցը, Երանուհի Թումանյանցն է: «Ժողովուրդ» օրաթերթը անձամբ Երանուհի Թումանյանցին հարց ուղղեց՝ կգնա նա Կարեն Անդրեասյանի հետեւից, թե ոչ: Դատավորը լսեց հարցը, բազմանշանակ ժպտաց ու չպատասխանելով՝ հեռացավ: Հիշեցնենք, որ 2022 թվականի հոկտեմբերի 7-ին Կարեն Անդրեասյանն ընտրվեց Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) նախագահ ու իր հետ ԲԴԽ բերեց իր մտերիմներին: Մասնավորապես՝ իր սանիկ դատավոր Քրիստինե Մկոյանին ու արդարադատության փոխնախարար Երանուհի Թումանյանցին: Բանն այն է, որ Կարեն Անդրեասյանն ու Երանուհի Թումանյանցը համատեղ աշխատել են Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակում, որից հետո Երանուհի Թումանյանցն Անդրեասյանի հետ տեղափոխվել է «ԱՄ» իրավաբանական գրասենյակ, ապա արդարադատության նախարարություն, ներկայումս էլ ԲԴԽ-ում է: Եվ ահա, նոյեմբերի 18-ին Կարեն Անդրեասյանը հրաժարական տվեց՝ նշելով՝ «Գնում եմ առանց սկանդալի, մաղձի ու հիասթափության եւ այս թունավոր պաշտոնում՝ իբրեւ ամենաերկարը դիմացած»: Նրա հետեւից ԲԴԽ-ում դեռ «դիմանում» են հավատարիմ կադրերը:

ԶՐՈՒՅՑ

# ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆԸ՝ ԻՐ ԴԵՄ ԱՐՎԱԾ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ

**«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանն է:**

**-Պարոն Սարուխանյան, երեկ Նիկոլ Փաշինյանը, ըստ էության, հայտարարեց, որ Ձեր թեկնածությունը մերժում են, պետք է ՔՊ-ն նոր ընտրություններ անի, թեկնածուներ առաջադրվեն եւ ժ/պ ընտրվի, որն էլ Գյումրու արդեն համայնքապետի ընտրություններում կլինի ՔՊ-ի թեկնածուն: Ընդամենը երեկ վստահեցնում էիք, որ թե՛ համայնքապետի ժ/պ-ի, թե՛ ընտրություններում համայնքապետի թեկնածուն Դուք եք, ի՞նչ կատարվեց:**

-Այն ժամանակ, երբ քննարկվում էր Գյումրու ընտրությունների հարցը, դեռ ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հարց չէր քննարկվում. օրենքի փոփոխություն պետք է արվի: Տրամաբանությունն այն էր, որ պետք է գնանք արտահերթ ընտրությունների՝ առանց ժ/պ-ի, բայց երբ խնդիր առաջացավ, որ ընտրություններ անցկացնելու դեպքում խոչընդոտներ ենք ունենալու, այդ ժամանակ որոշվեց՝ համայնքապետի ժ/պ կնշանակվի:

Վարչապետը երեկ ժ/պ առաջադրվելու համար կոչով դիմեց գյումրեցիներին, սա նորմալ, ժողովրդավարական մոտեցում է:

**-Խնդիրն այստեղ այն է, որ թմրանյութի Ձեր թեստի վերաբերյալ սկանդալից հետո այս որոշումը կայացվեց, ստացվում է՝ Ձեր թիմը Ձեզ մերժեց, որպեսզի ընտրություններից առաջ նոր աղմուկից խուսափի:**

-Ես չեմ կարող սկանդալ անվանել դա: Թեստի վերաբերյալ աղմուկը մեկնաբանել եմ, այն մարդիկ, ովքեր դրա արդյունքներում խնդիր կտեսնեն, ես կարող եմ մի նմուշ էլ իրենց տալ՝ տանեն ու ստուգումներ անեն:

**-Պարոն Սարուխանյան, հիմա ինքնաառաջադրման նոր ժամկետ է սահմանվել համայնքապետի ժ/պ-ի համար, Դուք կրկին փորձելո՞ւ եք, կառաջադրե՞ք Ձեր թեկնածությունը:**

-Ես հայտարարել եմ, որ քանի դեռ չեմ տիրապետում, թե «փրայմերիզն» (նախնական) ի՞նչ սկզբունքներով է արվելու, քանի չեմ խորհրդակցել Գյումրու տարածքային կազմակերպության մեր կուսակցականների հետ, չեմ կարող այդ հարցին պատասխանել, ակնկալում եմ գյումրեցիներից, որ իրենց տեսակետը եւս հայտնեն:

**-Նոյեմբերի 26-ին իր ուղերձում Նիկոլ Փաշինյանը նաեւ մի ուշագրավ հայտարարություն արեց, որ հնարավոր է լինեն ինքնաառաջադրումներ ԺՊ-ի պաշտոնի համար, որոնք մերժվեն, սա, կարծես, նաեւ Ձե՞զ էր ուղղված:**

-Չի կարող դա ինձ ուղղված լինել: Եթե ես առաջադրվեմ կամ ինքնաառաջադրվեմ, ապա այդտեղ մերժելու հիմք չկա:

**-Հիմքը արդեն նշեցինք՝ թմրանյութի թեստի վերաբերյալ բացահայտումն էր:**

-Ամեն մարդու մասին կարող են սուտ տեղեկություններ տալ, կան հիմքեր, որոնք ես հրապարակել եմ, մարդիկ ինձ ճանաչում են, գիտեն՝ որն է իրականությունը:

**-Պարոն Սարուխանյան, թեստի արդյունքների վերաբերյալ Ձեր գրառման մեջ Դուք ակնարկել էիք, որ հենց Ձեր թիմից էլ եղել են մարդիկ, ովքեր արշավ են տարել Ձեր դեմ, պատվերներ են կատարել:**

-Ես չեմ ակնարկել, որ հենց իմ թիմակիցներն են, ես ասել եմ՝ «քաղաքապետացուներ», իսկ նրանք կարող են լինել ոչ կուսակցականներ:

Գյումրիում մենք ունենք անհատներ, որոնք թիմի որոշ անդամների հետ ունեն լավ հարաբերություններ եւ նույնպես ցանկացել են այդ գործընթացին մասնակցել՝ ինձ սեւացնելու համար, հիմա այդ հնարավորությունն ունեն, կարող են առաջադրվել կամ ինքնաառաջադրվել եւ մասնակցել: Ըստ այդմ՝ չափելի կլինի, թե Գյումրիում ով, ինչ հեղինակություն ունի:

**-Այդ դեպքում ո՞ւմ եք նկատի ունեցել, ինչո՞ւ անուններ չեք հնչեցնում:**

-Ես նկատի եմ ունեցել բոլոր այն անձանց, որոնք վարչապետի առաջարկությունից հետո փորձել են մտնել գործընթացի մեջ: Ինչո՞ւ անուններ հնչեցնեմ, եթե գյումրեցիները շատ լավ գիտեն:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՊԿ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի մասնակցի վաղը (խմբ. այսօր) Աստանայում կայանալիք ՀԱՊԿ գագաթնաժողովին: Այս մասին լրատվամիջոցների հետ զրույցում հայտնել է վարչապետի խոսնակ Նազելի Բաղդասարյանը:

«ՀԱՊԿ-ի աշխատանքներին մասնակցությունը սառեցնելու մասով ՀՀ դիրքորոշումը չի փոխվել»,- ասաց Բաղդասարյանը:

## ԱԳՆԵՍԱ ԽԱՄՈՅԱՆԸ՝ ԳԵՂԱՄ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ագնեսա Խամոյանը սոցցանցի իր էջում գրել է. «Հարգելի՛ լրագրողներ, ի պատասխան ձեր բազմաթիվ հարցերի՝ հայտնում եմ՝ Գեղամ Նազարյանի վերջին հայտարարությունը, թե Նիկոլ Փաշինյանին հեռացնելու օրակարգ չկա, իր անձնական ընկալումներն են, որը, բնականաբար, չի արտահայտում «Հայաստան» խմբակցության տեսակետը:

Մեր թիվ մեկ օրակարգը ինչպես եղել, այնպես էլ մնում է այս իշխանություններին հեռացնելը, եւ բնական է, եթե խմբակցության որեւէ պատգամավոր չի կիսում այդ գաղափարը, հարցը պետք է դառնա քննարկման առարկա:

Խմբակցությունը Գեղամ Նազարյանին մանդատը վայր դնելու «խնդրանքով» չի կարող դիմել, բայց եւ ակնհայտ է, որ քննարկվելու է խմբակցությունում պարոն Նազարյանի հետագա գործունեության հարցը:

Թե ինչ կորոշվի խմբակցության նիստից հետո, պարզ կլինի միայն նիստից հետո: Նիստի ժամկետների մասին հավելյալ տեղեկությունները՝ ավելի ուշ»:

## COP17–Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿՈՄԻՏԵ ԿՍՏԵՂԾՎԻ

Վարչապետը որոշում է ստորագրել Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի կազմակերպման եւ անցկացման նպատակով կոմիտե ստեղծելու եւ դրա կազմը հաստատելու մասին:

«Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով՝

1. 2026 թվականին Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովի կազմակերպման եւ անցկացման նպատակով ստեղծել կոմիտե եւ հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, վարչապետին ներկայացնել առաջարկություններ կոմիտեի աշխատանքներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավման մեխանիզմների վերաբերյալ»,- ասված է որոշման մեջ:

Հիշեցնենք՝ 2026 թ. Հայաստանը հյուրընկալելու է Կենսաբազմազանության կողմերի համաժողովը՝ COP17-ը:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

# ԱՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ՝ «ՀԻՇԵՑՆԵԼՈՎ ԹՈՌՆԻԿԻՆ»

**SocialMedia.am-ի տեղեկություններով՝ նոյեմբերի 25-ին ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի փակ հանդիպումը շատ թեժ է անցել:**

Ալեն Սիմոնյանը սպառնալիքներ է հնչեցրել Աղազարյանի եւ նրա ընտանիքի անդամների հասցեին, ընդհուպ ասել է. «Կարող է՝ մի օր թոռնիկդ դպրոցից էլ տուն չվերադառնա»:

Տեղեկությունը ճշտելու համար SocialMedia.am-ը կապ հաստատեց Հովիկ Աղազարյանի հետ: Վերջինս, սակայն, խնդրեց իրեն ավելի լուրջ հարցեր տալ:

**-Նման խոսակցություն, սպառնալիքներ չե՞ն եղել Ձեր եւ Ալեն Սիմոնյանի խոսակցության ժամանակ:**

-Իհարկե՝ ոչ:

**-Դուք երեկ պնդում էիք, որ ավելի լավ է Ալեն Սիմոնյանը Ձեզ սպառնար՝ «քան աներ այն, ինչ արեց»: Այդ ի՞նչ է արել նա, որ ազդվել եք, ու որոշեցիք Ձեր՝ մանդատ դնել-չդնելու որոշման մասին չհայտարարել:**

-Դուք նայեք իմ պարզաբանումը, ես էմոցիոնալ բան եմ ասել, որը սխալ է հասկացվել, ճիշտ հակառակն է եղել, կարդացեք, խնդրում եմ, 24news.am-ին տված իմ պարզաբանումը:

**-Պարոն Աղազարյան, պարզապես Դուք անընդհատ փոխում եք Ձեր խոսքը, որոշումները, ուզում էինք հասկանալ՝ ի՞նչ է կատարվում իրականում:**

-Լավ եմ անում:

Այսպես ավարտեց զրույցը պատգամավորը: Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ Հովիկ Աղազարյանը լրագրողների հետ զրույցում նշել է՝ չի կարող մանրամասներ ասել իր եւ Ալեն Սիմոնյանի զրույցից, որովհետեւ հարմար չի գտնում:

«Ես մանրամասներ ասելու իրավունք չունեմ: Ինքը թող ասի՝ ինչ ուզում է: Ես որեւէ մանրամասնություն Ազգային ժողովի նախագահ պարոն Սիմոնյանի եւ իմ զրույցից կոռեկտ չեմ համարում ասել:

Ես կուզեի, որ Ալեն Սիմոնյանը ինձ սպառնար, քան այն, որ արեց ինքը իմ գլխին: Ավելի լավ է՝ սպառնար, քան այն, որ ինքը իմ հետ խոսեց այդպես: Չէ, վիրավորական չէ, ո՞ւր էր, թե վիրավորական լիներ, պատասխան ստանար: Վատ բան չի ասել, ուղղակի ճնշել է ինձ ուրիշ իմաստով», - մանրամասնել էր Աղազարյանը:

## ԻՐԱՎԻՃԱԿ

## ՀՐԱԴԱԴԱՐԸ ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ

Իսրայելի եւ լիբանանյան «Հըզբալլահ» խմբավորման միջեւ հրադադարն ուժի մեջ է մտել Գրինվիչի ժամանակով նոյեմբերի 27-ին՝ ժամը 2:00-ին (Երեւանի ժամանակով 6:00-ին): Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ջո Բայդենը տեսաուղերձում հայտարարել է, որ երկու կողմերն էլ ընդունել են ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի միջնորդությամբ ձեռք բերված համաձայնագիրը: Այս մասին հաղորդում է Reuters-ը:

Լիբանանի հարավից վերջին ամիսներին տեղահանված մարդիկ մեքենաներով սկսել են վերադառնալ իրենց բնակավայրեր:

Ըստ հրադադարի համաձայնագրի՝ պետք է վերջ դրվի հակամարտությանը, որն Իսրայելի եւ Լիբանանի սահմանին սկսվել էր 2023 թվականի հոկտեմբերից՝ Գազայի հատվածում Իսրայելի եւ պաղեստինյան ՀԱՄԱՍ-ի միջեւ ռազմական գործողություններին զուգահեռ:

## ԻՐԱՆԻՆ ԹՈՒՅԼ ՉԵՆ ՏԱ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Յոթնյակի (G7) երկրները վերահաստատել են իրենց վճռականությունը՝ թույլ չտալու Իրանին միջուկային զենք ձեռք բերել:

Այս մասին ասված է Իտալիայում կայացած Յոթնյակի խմբի նախարարների հանդիպման արդյունքներով հայտարարության նախագծում:

«Մենք վերահաստատում ենք մեր վճռականությունը, որ Իրանը երբեք չպետք է ստեղծի կամ ձեռք բերի միջուկային զենք: Մենք կշարունակենք աշխատել այդ ուղղությամբ՝ հակազդելու Իրանի միջուկային էսկալացիային», - նշվում է փաստաթղթի նախագծում:

G7-ի նախարարները դիվանագիտությունն են անվանել «այս խնդիրը լուծելու» լավագույն գործիքը:

## ՆՈՐ ՀԱՐՎԱԾՆԵՐ

Վերջին օրերի ընթացքում Ուկրաինայի զինված ուժերը արեւմտյան հեռահար զենքով երկու հարված են հասցրել Կուրսկի մարզում գտնվող թիրախներին՝ հայտնել է Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը՝ներկայացնելով հրթիռների բեկորների լուսանկարներ:

Ըստ հաղորդագրության՝ նոյեմբերի 23-ին ամերիկյան ATACMS 5 հրթիռով թիրախավորվել են C-400 զենիթահրթիռային դիվիզիայի դիրքերը: Հրթիռներից 3-ը խոցվել է, մյուս երկուսի անկման հետեւանքով կան ավերածություններ եւ տուժածներ:

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը զգուշացրել է՝ պատասխան գործողություններ են նախապատրաստվում:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ ԿՌԻՎ Է ԳՑԵԼ ՔՊ-ՈՒՄ

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

**Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքը՝ Գյումրին, նոր կռվախնձոր է դարձել քաղաքական դաշտում:**

Համայնքապետի ընտրությունների օրը դեռ անորոշ է, փոխարենը շատ են թեկնածուները, ովքեր հավակնում են դառնալ Գյումրու քաղաքապետ:

Քաղաքապետի պաշտոնը կռիվ է գցել հատկապես ՔՊ-ի դուռը:

Այսպիսով, թեեւ իշխանությունը դեռ նոյեմբերի 14-ին հայտարարել էր, որ Գյումրիում իրենց քաղաքապետի թեկնածուն պատգամավոր Կարեն Սարուխանյանն է լինելու, բայց նրա՝ թմրանյութի թեստի աղմկահարույց բացահայտումներից հետո, փաստորեն, Փաշինյանը փոշմանել է ու մերժել է Սարուխանյանին՝ հերթական սկանդալը հանդարտեցնելու համար:

Երեկ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ մինչ համայնքապետի ընտրությունները ՔՊ-ն դեկտեմբերի 8-ին, 9-ին եւ 10-ին նախնական ընտրություններ կկազմակերպի քաղաքապետի ժ/պ ընտրելու համար, ընտրությունների արդյունքում ընտրված թեկնածուն էլ արդեն կլինի ՔՊ-ի քաղաքապետի թեկնածուն:

Այսպիսով՝ Գյումրու համայնքապետի ընտրություններում, այսպես ասած, իշխանական թեւը ներկայումս ունի հետեւյալ տեսքը՝

- Հայաստանի տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Կարեն Պետրոսյան. հանդիսանում է վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանի մտերիմն է
- ԱԺ պատգամավոր, Շիրակի նախկին մարզպետ Կարեն Սարուխանյան. թմրանյութի իր թեստի հետ կապված բացահայտումներից հետո սկանդալի կենտրոնում է հայտնվել
- Իշխանական մյուս թեկնածուն վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի բարեկամ Վահագն Մկրտչյանն է. նախկինում Գյումրու փոխքաղաքապետի պաշտոնն է զբաղեցրել

Իշխանական թեւում քաղաքապետի պաշտոնը իսկական կռվախնձոր է դարձել, ինչի մասին թմրանյութի իր թեստի արդյունքների վերաբերյալ գրառման մեջ խոստովանել է հենց Կարեն Սարուխանյանը:

«Ներթիմային քննարկումների արդյունքում չեղավ կոնսենսուս, թե ով է լինելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ապագա քաղաքապետի թեկնածուն:

Արդյունքում՝ կուսակցության վարչությունը որոշեց Գյումրիում ձեւավորել ՔՊԿ տարածքային կազմակերպություն եւ ըստ մեր մոտեցման՝ տարածքային կազմակերպության նախագահը դիտարկվելու է որպես տեղի թիմի լիդեր եւ առաջնորդելու է մեր նախընտրական ցուցակը:

Անձինք, ովքեր պատերի տակ մշտապես խոսում էին՝ իբր իրենք են ՔՊ թեկնածուն՝ ունենալով որոշակի հովանավորչություն, բարեկամական եւ անձնական կապեր որոշ մարդկանց հետ, շարունակեցին իմ դեմ արշավը՝ փորձելով անել ամեն բան, որ սեւացնեն իմ անունը եւ ստեղծեն իրավիճակ, երբ փոփոխման ենթակա կլինի թեկնածուն: Այդ ամենը արվում էր շատ հստակ, համակարգված, պատվեր կատարող որոշ բլոգերների թեթեւ ձեռքով գրված հատուկ հոդվածներով, ֆեյք էջերով մկենաբանություն գրողների ձեռամբ՝ իբր Սարուխանյան Կարենը թմրամոլ է»,- գրել է Սարուխանյանը:

Գյումրու սպասվելիք ընտրությունները կարծես լույս սփռեցին ներիշխանական վեճերի վրա եւ կոտրեցին ՔՊ-ի ձեւավորած այն կարծրատիպը, թե իրենք կուռ եւ ամուր մի թիմ են:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գյումրու քաղաքապետի ընտրություններում իր թեկնածություններն են պատրաստվում նաեւ առաջադրել ներքոնշյալ անձինք՝

- Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը, որը շատ ձայներ ունի
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության կանանց խորհրդի նախագահ Հասմիկ Վիրաբյանը, ով քաղաքական ակտիվ գործունեություն է ծավալում
- Գյումրու ավագանու անկախ անդամ, «Զարթոնք» խմբակցության նախկին ղեկավար Վարդեւան Հակոբյանը
- Գյումրու ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար Կարեն Մալխասյանը
- «Գործարար» կուսակցությունից Գեղամ Բաղդասարյանը
- «Լուսավոր Հայաստան» կուսակցության անդամ, ԱԺ նախկին պատգամավոր Սարիկ Մինասյանը:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԵԳԻՊՏՈՍԻ ԱՓԵՐԻ ՄՈՏ ԽՈՐՏԱԿՎԱԾ ՆԱՎԸ

Տարբեր ազգությունների զբոսաշրջիկների տեղափոխող՝ Եգիպտոսի ափերի մոտ խորտակված նավի վրա Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն եղել: Այս մասին տեղեկացրեց ՀՀ արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Անի Բաղալյանը:

«Նավի վրա ՀՀ քաղաքացիներ չեն եղել», - նշեց ԱԳՆ խոսնակը:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Եգիպտոսում՝ Կարմիր ծովի ափերի մոտ, խորտակվել է Sea Story նավը, որի տախտակամածին եղել է 45 մարդ, այդ թվում՝ 31 զբոսաշրջիկ եւ անձնակազմի 14 անդամ: 16 մարդու հաջողվել է փրկել: Նրանցից մի քանիսին փրկել են ուղղաթիռով, այնուհետեւ՝ տեղափոխել հիվանդանոց:

## ԱԶԱՏՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նոյեմբերի 26-ին տեղի է ունեցել ՆԳ նախարարության կարգապահական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է ՆԳՆ գլխավոր քարտուղար Արա Ֆիդանյանը:

ՆԳՆ-ից հայտնում են, որ նիստին մասնակցել են ՆԳՆ ՀՈԳՎ պետը, ոստիկանության պետի տեղակալը, Փրկարար ծառայության տնօրենի տեղակալը, ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչության պետը, իրավաբանական վարչության պետը, ինչպես նաեւ կարգապահական հանձնաժողովում ընդգրկված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

«Նիստի ընթացքում ուսումնասիրվեցին եւ քննարկվեցին ոստիկանության ութ աշխատակցի նկատմամբ իրականացված ծառայողական քննության նյութերն ու եզրակացությունները:

Փաստական հանգամանքները վերլուծելուց հետո կարգապահական հանձնաժողովը որոշում կայացրեց միջնորդել ծառայողական քննությունը նշանակած պաշտոնատար անձանց՝ ոստիկանության 7 ծառայողի ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ առաջարկելով կիրառել «Ոստիկանությունից ազատում» կարգապահական տույժը, իսկ 1 ծառայողի նկատմամբ՝ «Նկատողություն» կարգապահական տույժը»,- ասվում է հաղորդագրությունում:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՀՐԴԵՀԻ ՀԵՏՔԵՐՈՎ

# ՎԱՐՈՐԴԻ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՅՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՎ ԿԱ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ

**Իրավապահ համակարգում կասկածելի է այն հանգամանքը, որ Երեւանի փոխքաղաքապետի վարորդի անվամբ հաշվառված Lexus մակնիշի ավտոմեքենաները, որոնք այրել են, հենց նրան են պատկանում: Չի բացառվում, որ փոխքաղաքապետի վարորդին փաստացի պատկանող մեքենաները այրելով՝ կոնկրետ անձինք Արմեն Փամբուխչյանին են փորձել «բան հասկացնել», ինչը, օրինակ, կատարվեց ՔՊ-ական Հայկ Սարգսյանի ընտանիքին պատկանող խանութի տարածքում՝ պայթյուն իրականացնելով:**

Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեից հայտնեցին, որ կա նախաձեռնված քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով: Մեկ անձ, հանցավոր արարքը կատարելու հիմնավոր կասկածի հիմքով, ձերբակալված է: Նախաքննությունը շարունակվում է:

Ինչ զարգացումներ եղան կասկածելի հրդեհից առաջ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «Մեր տեղեկություններով՝ Անդրանիկ Քոչարյանը ՔՊ-ականների մոտ վստահ պնդել է, թե Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի ԱԺ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի որդուց՝ Դավիթ Սեդրակյանից, ավտոմեքենա է նվեր ստացել, թաքցրել հանրությունից, իր թիմից: «Ժողովուրդ» օրաթերթը այս հարցադրումներով դիմել էր Արմեն Փամբուխչյանին՝ պարզելու, թե որքանով են իրական այս տեղեկությունները, եւ պատրաստվում է արդյոք Արմեն Փամբուխչյանը աշխատանքից ազատման դիմում գրել եւ հրաժարվել Երեւանի ավագանու իր մանդատից: Սակայն Փամբուխչյանը, մեր այս հարցերին ի պատասխան, նշեց, որ տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում: Տեղեկացնենք, որ Արմեն Փամբուխչյանը 2021 թվականին գնել է LEXUS մակնիշի մեքենա, իսկ ահա փոխքաղաքապետի կինը տարվա ընթացքում մեքենաներ է գնել եւ վաճառել»:

Ահա այս հրապարակումից երկու օր անց հրդեհում են վարորդին պատկանող մեքենաները, ինչը կասկածի տեղիք է տալիս:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 24-ին առեղծվածային դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Հրդեհ էր բռնկվել Նոր Արեշ 44 փողոցի տներից մեկի առաջին հարկում գտնվող ավտոտնակում, որտեղ կայանված 2 Lexus մակնիշի ավտոմեքենաներից մեկը ամբողջությամբ այրվել էր, մյուսն էլ դարձել ոչ շահագործելի:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ հրդեհված Lexus-ները Երեւանի փոխքաղաքապետ Արմեն Փամբուխչյանի վարորդի անունով են եղել՝ դրանք Հայաստան են բերվել Փամբուխչյանի վարորդի անունով:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԹՄՐԱՆՅՈՒԹ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները, իրացնելով ստացված տեղեկությունները, թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով Մրգաշատ բնակավայրում ձերբակալել եւ Արմավիրի բաժին են տեղափոխել 50-ամյա տղամարդու: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել են չորացված, մանրացված կանեփանման զանգվածով փաթեթներ եւ նույն զանգվածով կաթուցիչ:

Մրգաշատցի տղամարդը հայտնել է, որ հայտնաբերվածը թմրանյութ է, պատրաստել է տնամերձ հողամասում աճեցրած կանեփից:

Նախաձեռնվել է քրեական վարույթ:

Արմավիրի բաժնի համայնքային ոստիկանների հաջորդ բացահայտումը նույնպես Մրգաշատում էր: Ստացված տվյալներն իրացնելով՝ նրանք այցելել են Մրգաշատ գյուղի բնակիչներից մեկի տուն: Տանտերը ոստիկաններին է ներկայացրել չորացրած, մանրացրած դեղնականաչավուն զանգված:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նրա տանը կատարված զննությամբ հայտնաբերվել է 40 գրամ կանեփանման զանգված:

Թմրամիջոցի հաջորդ հայտնաբերումն արձանագրվել է Ալաշկերտ բնակավայրում: Ըստ համայնքային ոստիկանների ստացած տեղեկության՝ Ալաշկերտի 31-ամյա բնակիչը աղավնաբնում պահում է թմրամիջոց:

Ալաշկերտ մեկնած համայնքային ոստիկաններին երիտասարդը աղավնաբնից ներկայացրել է կանեփանման չորացված զանգված: Նա ձերբակալվել եւ տարվել է համայնքային ոստիկանության Արմավիրի բաժին, որտեղ խոստովանել է, որ իր ներկայացրած 73 գրամ զանգվածը մարիխուանա է՝ անձնական օգտագործման համար:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Արմավիրի մարզային քննչական վարչություն:

Հաջորդ դեպքում Արմավիրի համայնքային ոստիկաններն այցելել են Ջանֆիդա: Բացատրական աշխատանքի արդյունքում 59-ամյա տղամարդը իրավապահներին է ներկայացրել կանեփի չորացած ճյուղեր եւ 18 գրամ կանեփանման զանգվածով ապակյա տարա: Հայտնել է, որ կանեփն աճեցրել է անձնական օգտագործման համար՝ թմրանյութ պատրաստելու նպատակով: Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Արմավիրի մարզային քննչական վարչություն:

## ԻՆՉ ԳՈՐԾՈՎ ԵՆ ՓՈՐՁԵԼ ՔՆՆԻՉԻՆ ԿԱՇԱՌԵԼ

Հակակոռուպցիոն կոմիտեից երեկ «Ժողովուրդ» օրաթերթին հաստատեցին՝ քրեական վարույթի շրջանակներում քննչական կոմիտեի քննիչ է ձերբակալվել:

Նոյեմբերի 26-ին հրապարակել էինք, որ «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից ձերբակալվել է Կենտրոնի առաջին բաժնի քննիչ՝ 3000 դոլար կաշառքի կասկածանքով:

Իսկ թե ինչ քրեական գործով են փորձել կաշառել քննիչին, մանրամասներն առաջիկայում:

Ավելի վաղ ArmLur.am-ը գրել էր, որ լրատվականի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից ձերբակալվել է կենտրոնի առաջին բաժնի քննիչ՝ 3000 դոլար կաշառքի կասկածանքով:

*Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՊԱՏԱՆԻ Է ԴԱՆԱԿԱՀԱՐՎԵԼ

Նոյեմբերի 25-ի գիշերը՝ 2:35-ին, հիվանդանոցից ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն հաղորդում է ստացվել, որ որովայնի կտրած-ծակած թափանցող վերքով բուժօգնության է տեղափոխվել 15-ամյա պատանի, որի հայրը հիվանդանոցում հայտնել էր, որ որդին նկուղում ընկել է շամփուրի վրա:

ՔՈԳՎ Երեւան քաղաքի վարչության ծառայողները, սակայն, ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզել են, որ ժամը 1:30-ի սահմաններում Շոպրոնի փողոցի 1-ն նրբանցքի շենքերից մեկի մոտ մի խումբ անձանց միջեւ տեղի ունեցած վիճաբանություն-ծեծկռտուքի ժամանակ պատանուն դանակով հարվածել է ոմն Հայկը:

Հետագա միջոցառումներով ոստիկանները պարզել են վիճաբանության մասնակիցների ինքնությունը: Պարզվել է, որ 15-ամյա պատանուն դանակով հարվածել եւ ծանր մարմնական վնասվածք է պատճառել Ձրվեժի բնակիչ 22-ամյա երիտասարդը: Նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է ՔՈԳՎ Երեւան քաղաքի վարչություն, որտեղ խոստովանել է կատարած հանցագործությունը:

22-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Նոր Նորքի քննչական բաժին:

Հանգամանքները պարզվում են:

## ԱՐՄԵՆ ՉԱՐՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԸ ԿՐՃԱՏՎԵԼ Է

«Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրեն, ԱԺ նախկին պատգամավոր Արմեն Չարչյանի նկատմամբ նշանակված 3 տարի ժամկետով փորձաշրջանը կրճատվել է 1 տարի ժամկետով: Այս մասին հայտնել է փաստաբան Էրիկ Ալեքսանյանը:

«Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանը (դատավորներ՝ Լուսինե Ալավերդյան, Գրիգոր Հովհաննիսյան, Կարեն Հովհաննիսյան) Արմեն Չարչյանի գործով մեղադրող դատախազի բողոքը մերժեց, իսկ պաշտպանության կողմի ներկայացրած բողոքը բավարարեց մասնակի՝ առաջին ատյանի դատարանի կողմից Արմեն Չարչյանի նկատմամբ նշանակված 3 տարի ժամկետով փորձաշրջանը կրճատվեց 1 տարի ժամկետով:

Արմեն Չարչյանը կշարունակի մնալ ազատության մեջ», - նշել է Ալեքսանյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 26-ից 27-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 110 դեպք, որից 1-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐԶ

### ՉԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԵՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Նոյեմբերի 25-ին Երեւանում՝ հակակոռուցիոն դատարանում, դատավոր Վահե Դոլմազյանի նախագահությամբ կայացավ Բերդ համայնքի Վերին Կարմիրաղբյուրի նախկին համայնքապետ, նախկին վարչական ղեկավար, ներկայումս Բերդի համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ, 1971թ. ծնված Կամո Չոբանյանի դատավարության նիստը: Նրան մեղադրանք է առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 445 հոդվածի 1-ին մասով, որ վարժական հավաքներին մասնակցելու պարտավորություն ունեցողների ցուցակում՝ 2024թ. փետրվարի 2-ին Բերդի համայնքապետարանից զինկոմիսարիատ ուղարկած անվանացանկում իր որդու՝ Մանվել Չոբանյանի անվան դիմաց գրել է, որ նա գտնվում է ՌԴ-ում, երբ վերջինս այդ ժամանակ գտնվել է ՀՀ-ում: Կամո Չոբանյանի շահերը պաշտպանում է փաստաբան Արթուր Մելիքբեկյանը: Նոյեմբերի 25-ին ավարտվեց նախնական լսումների փուլը, սկսվեցին դատական լսումները: Նիստում ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Դավիթ Հարությունյանը ներկայացրեց քրեական վարույթով առկա ապացույցները: Փաստաբան Ա. Մելիքբեկյանը դատարանի ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ քրեական գործում առկա, վարժական հավաքներին մասնակցելու պարտավորություն ունեցողների վերոհիշյալ անվանացուցակը ոչ թե բնօրինակ փաստաթուղթ է, այլ այդ փաստաթղթի պատճենից վերցված 2 թերթ: Նիստի ընթացքում, պատասխանելով դատավոր Վ.Դոլմազյանի հարցին, Կամո Չոբանյանը հայտարարեց, որ չի ընդունում իրեն մեղսագրված արարքը, ինքն այդ գործով մեղավոր չէ : Ավարտվեց գրավոր ապացույցների հետազոտման փուլը: Հաջորդ նիստը նշանակվեց 2025թ. հունվարի 7-ին՝ժամը 11-ին:

### ՀԵՏԻՈՏՆԻ ՈՒՂԻՆ ԱՅԴՊԵՍ ԷԼ ՉՎԵՐԱԲԱՑՎԵՑ

Դիլիջանի կենտրոնում քաղաքապետարանի շենքի մոտակայքից դեպի Դիլիջանի բժշկական կենտրոնի հարակից թաղամաս ձգվող հետիոտնի ճանապարհը գարնանից մինչեւ հիմա փակ է: Մասնավոր կառուցապատողը տուրիստական քաղաքի կենտրոնում հսկայական հենապատ է սարքել, որպեսզի դրանից ցած շենքեր կառուցի: Դիլիջանի բնակիչներին տարիներին շարունակ ծառայած, ներքեւ իջնող աստիճաններով հետոտնի կարճ ճանապարհն այդ տարածքը գնած, հենապատ սարքած սեփականատերը իրար վրա դարսված անվադողերով փակ է պահում: Աստիճաններից մի մասը տարածքի կառուցապատողը ջարդել է; Այս տարվա գարնանը տարածքի կառուցապատողը, ով ներկայացել էր որպես Դիլիջան քաղաքի բնակիչ, «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողին վստահեցրել էր, որ հետիոտնի այդ ճանապարհը իրենք շուտով կվերագործարկեն: Դրանից անցել է կես տարի, սակայն հետիոտնի ուղին վերաբացված չէ: Այս հարցում Դիլիջանի համայնքապետարանը՝ համայնքի ՔՊ-ական ղեկավար Դավիթ Սարգսյանի գլխավորությամբ, անգործության է մատնված:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

## ՕՁԻ ՏԱՐԻՆ «ԽՈՍՏԱՆՈՒՄ» Է...

# ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԽՈՅԵՐԻՆ ԵՎ ՑՈՒԼԵՐԻՆ

**2025 թվականին մասնավորապես սպասվում է անձնական աճի, կարիերայի եւ ֆինանսների զարգացում:**

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է, թե ինչ է սպասվում կենդանակերպի նշաններին:

Այսպիսով՝ *կենդանակերպի առաջին նշանին՝ խոյին*, որը համարվում է կրակի նշան, եկող տարին խոստանում է նոր հնարավորություններ, սակայն պահանջում է նաեւ խոհեւոմություն:

Տարեսկզբից խոյերի համար հնարավոր կլինի ստանալ եկամուտ տարբեր աղբյուրներից, չնայած, որ կարեւոր պայման է վերահսկել ծախսերը եւ խուսափել ավելորդություններից: Նախնիների ունեցվածքի կամ ստացած ժառանգության շնորհիվ եկամտի ավելացում կարող է լինել, բայց արդեն տարվա երկրորդ կեսին:

Ինչ վերաբերում է աշխատանքին, ապա 2025 թվականի ընթացքում աշխատանքի նոր հնարավորություններ կլինեն: Գործազուրկները հնարավորություն կունենան գտնել լավ աշխատանք, հատկապես՝ տարվա վերջին եռամսյակում: Բիզնեսի ոլորտում մարտահրավերներ են սպասվում, բայց հարկ է նշել, որ համբերատարության եւ խելամիտ պլանավորման դեպքում ամեն բան կհանգեցնի հաջողության:

Տարվա ընթացքում հնարավոր են փոքր առողջական խնդիրներ, հատկապես՝ մարսողության հետ կապված: Հարկ է հետեւել սննդակարգին եւ ճիշտ ժամանակին դիմել բժշկի:

2025 թվականը խոյերին նաեւ հնարավորություն է ընձեռելու նոր ճամփորդությունների համար: 2025 թվականի մայիսից հետո բացվելու են նոր ուղեւորություններ դեպի արտասահման, որոնք կզարգացնեն ինչպես մասնագիտական, այնպես էլ անձնական կյանքը:

2025 թվականին խոյերը պետք է խուսափեն որոշ քայլերից, որոնք կարող են վնասել նրանց հաջողությունները:

Այսպիսով՝ խոյերին խրհուրդ է տրվում չափից շատ ծախսեր չանել, խուսափել ավելորդ ծախսերից: Չնայած նրան, որ եկամուտը հնարավոր է մեծանա՝ չպլանավորված եւ անխոհեմ ծախսերը կարող են խնդիրներ առաջացնել: Հատկապես պետք է զգուշանալ պարտքեր վերցնելուց եւ ներդրումներ անելուց:

Խոյերը բնավորությամբ պոռթկուն են եւ եկող տարում պոռթկունությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ կարիերայի զարգացման համար: Կարեւոր է խուսափել կոնֆլիկտներից եւ համբերատար լինել գործընկերների ու ղեկավարների հետ:

*Անցնենք ցուլերին*: 2025 թվականը ցուլերի համար կլինի ակտիվ եւ փոփոխություններով լի տարի:

Ցուլերը տարվա առաջին կեսին կարիերայի առաջխաղացումներ կունենան: Յուպիտերի ազդեցությունը կբերի նոր հնարավորություններ, աշխատավարձի բարձրացում եւ ավելի լավ հարաբերություններ աշխատավայրում:

Ֆինանսական առումով տարին խոստումնալից է: Հաջող կլինեն հատկապես անշարժ գույքի ներդրումները, սակայն պետք է խուսափել բարձր ռիսկերով ֆինանսական գործարքներից, ինչպիսիք, օրինակ, բորսայի ներդրումներն են:

Սիրո եւ հարաբերությունների առումով տարին եւս նպաստավոր է ցուլերի համար:

Սիրային կյանքում հնարավոր են զգացմունքային զարգացումներ եւ ամուր կապեր: Երկարաժամկետ հարաբերություններում կարող են քննարկվել ամուսնություն եւ ընտանիքի ընդլայնում: Հարաբերությունների մեջ չգտնվող ցուլերը նոր եւ լուրջ հարաբերություններ կունենան: Տարեսկզբին հնարավոր են թյուրըմբռնումներ կամ ձգձգումներ, որոնք պետք է հաղթահարել համբերատարությամբ եւ պարզ հաղորդակցությամբ:

Առողջության առումով ցուլերը պետք է ուշադրություն դարձնեն իրենց կենսակերպին: Սթրեսն ու վատ սովորությունները կարող են խնդիրներ առաջացնել, ուստի անհրաժեշտ է պահպանել առողջ սննդակարգ եւ պարբերաբար զբաղվել ֆիզիկական վարժություններով: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել ստամոքսի, մեջքի եւ արյան ճնշման հետ կապված խնդիրներին:

Այս ամենը, իհարկե, հետաքրքիր է, սակայն պետք է հասկանալ, որ հաջողությունները կախված են Ձեր իսկ գործողություններից, պլանավորումներից:

«Ժողովուրդ» օրաթերթը սույն նյութի համար օգտվել է միջազգային աղբյուրներից:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՁՈՒԿԸ ՈՒ ՁԿՆԿԻԹԸ ԿԱՐՏԱՀԱՆՎԵՆ

ԱՐՏ-ՖԻԾ ընկերությունն արդեն 17 տարի շուկա է մատակարարում թարմ, որակյալ ու միջազգային ստանդարտներին համապատասխան ձուկ եւ ձկնկիթ: Ընկերությունն իր արտադրությունը սկսել է թառափազգիներից, այժմ ներկայացնում է իշխանի բազմաթիվ տեսակներ:

Գործարանում ներդրվել է միջազգային փորձ եւ հատուկ տեխնոլոգիաներ՝ համապատասխան միջազգային ստանդարտներին:

ԱՐՏ-ՖԻԾ ընկերության՝ ժամանակակից սարքավորումներով վերազինելու գործընկերն «Ակբա Լիզինգ»-ն է, որի աջակցությամբ գործարանում տեղադրվել է նաեւ արեւային կայան:

«Տարիների ընթացքում ստացել ենք ձկան յուրօրինակ տեսակներ. ունենք 7-8 տարեկան ձկներ, որոնցից կարող ենք ստանալ նաեւ սեւ խավիար: Իմ բիզնեսի զարգացման մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում «Ակբա Լիզինգ»-ը, որի շնորհիվ ձեռք ենք բերել արտադրամասի սառնարաններ, սառույցի սարքավորումներ, արեւային պանելներ, որոնք օգնեցին մեզ զարգացնել արտադրությունը: Արեւային կայանների միջոցով կարողացանք մեր ձկան ինքնարժեքը ավելի մատչելի դարձնել: Աշխատում ենք սեւ խավիար արտադրելու ուղղությամբ, որը մեր համակարգերի շնորհիվ կվերամշակենք ու կարտահանենք»,- նշել է ԱՐՏ-ՖԻԾ ընկերության հիմնադիր տնօրեն Արտյոմ Թորոսյանը:

Այժմ ընկերության արտադրանքը առկա է տեղական շուկայում, ինչպես նաեւ արտահանվում է ԱՊՀ երկրներ: Առաջիկայում նախատեսվում է ընդլայնել արտադրությունը՝ իրականացնելով արտահանում նաեւ Եվրոպա եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

«Ակբա Լիզինգ»-ի 100% բաժնետերը «Ակբա» բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

### ՋԻՆՎԱԾ ՄՏԵԼ ԵՆ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ԱՐԳԵԼՈՑ

Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը հայտնել է, որ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի սահմանակից տարածքում արտակարգ միջադեպ է տեղի ունեցել:

Մի խումբ անձինք՝ զինված ակոսափող հրազենով, որսորդական հանդերձանքով եւ գիշերային տեսողության սարքավորումներով, ներթափանցել են հատուկ պահպանվող տարածք՝ ակնհայտորեն նպատակ ունենալով որս իրականացնել:

Նշված անձինք կրակել են հիմնադրամի պահպանության տեսախցիկի ուղղությամբ՝ փորձելով վնասել FPWC գույքը»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 15 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԸՆԹԱՑԻԿ

# ՍԵՎ ՈՒՐԲԱԹԻՆ ԸՆԴԱՌԱՋ՝ ՄԵԾ ՋԵՂՉԵՐ

Սեւ ուրբաթին ճամփորդելու սիրահարները նույնպես անակնկալ ունեն IDBank-ից. պատվիրելով Travel Card Idram&IDBank հավելվածով՝ հաճախորդները կստանան 80% զեղչ քարտի առաջին տարվա սպասարկման վճարի համար:

Վճարելով ընդամենը 4.000 դրամ՝ նախկին 20.000 դրամի փոխարեն, ճամփորդելիս կվայելեք քարտի մի շարք առավելություններն ու հնարավորությունները:

IDBank-ի էկոհամակարգի զարգացման եւ գործընկերների հետ համագործակցության գծով մենեջեր Գոհար Ղուկասյանի խոսքով՝ Travel Card-ը հաճախորդների սիրելի պրոդուկտներից է, այդ պատճառով էլ թիմը որոշեց օգտագործել Սեւ ուրբաթն ու հնարավորություն տալ այլ հաճախորդների առավել հարմար պայմաններով ձեռք բերել քարտը. «Travel Card-ը բազմաթիվ հնարավորություններ ունի՝ 24/7 հասանելի կոնսիերժ ծառայությունից մինչեւ քեշբեքեր ողջ աշխարհից. ճամփորդելը իսկապես շատ հեշտ, հարմարավետ ու երբեմն նաեւ շահութաբեր է դառնում այս քարտի շնորհիվ: Այս արշավն էլ, վստահ ենք, կուրախացնի նոր երկրներ բացահայտել սիրող մեր հաճախորդներին», - նշեց Գոհար Ղուկասյանը:

IDBank-ի Travel Card-ի շնորհիվ հնարավոր է ստանալ 0,5%-ից մինչեւ 1,5% քեշբեք ողջ աշխարհում գնումներ եւ վճարումներ կատարելիս, ինչպես նաեւ 0,5% քեշբեք՝ idcoin-ի տեսքով, մուտքի հնարավորություն աշխարհի 1300 օդանավակայանների բիզնես սրահներ, ինտերնետ ռոումինգ, 50% զեղչ պահատեղերի համար եւ շատ այլ առավելություններ, որոնց կարելի է ծանոթանալ այստեղ: Առաջարկը գործում է նոյեմբերի 25-ից մինչեւ դեկտեմբերի 2-ը: Արշավի մանրամասները՝ բանկի կայքում:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԲ ԿՈՂՄԻՑ

# ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՉԻ ԹԱՆԿԱՆԱ

Նոյեմբերի 27-ի նիստում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանել է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից բաժանորդներին խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2025 թվականի սակագները:

Սոցիալապես անապահով բաժանորդների համար 2025 թվականին սակագինը՝ 180 դրամ, մյուս բոլոր բաժանորդների համար՝ 200,42 դրամ:

Հանձնաժողովի կողմից կատարված մոնիթորինգի արդյունքում հաշվարկվել է լրացուցիչ 438387 խմ ծավալ, որը սակագնի վրա ունեցել է դրական ազդեցություն՝ շուրջ 0,4 դրամ/խմ-ով: Բացի այդ, դրական ազդեցություն է ունեցել նաեւ մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխությունը:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարությունը նախորդ երկու տարիներին համարժեք սուբսիդավորմամբ չեզոքացնում էր սպառողների կողմից վճարվող շուրջ 200 դրամը գերազանցող շուրջ 6 դրամը:

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՇՈՒԿԱ

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԳԵՐԱԿՇԻՌ

**2024 թվականի նոյեմբերի 4-ից նոյեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի ֆոնդային շուկան դրսեւորել է խառը դինամիկա: Telecom Armenia-ի բաժնետոմսերը փոքր-ինչ վերականգնվել են՝ 4,7%, չնայած հաղորդումներին, որ երկրում հեռահաղորդակցության եկամուտը տարեկան կտրվածքով նվազել է 3,1%-ով: ԱԿԲԱ բանկի բաժնետոմսերն իրենց հերթին նշված ժամանակահատվածում նվազել են 1,6%-ով, չնայած Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) նախագահ Ռուբեն Մելիքյանի այն հայտարարությանը, որ բանկային համակարգի եկամուտն ունի $1,0 մլրդ զուտ շահույթ ստանալու ներուժ: Հիշեցնենք, որ 2023 թվականին եկամուտը կազմել է մոտ 567,8 միլիոն դոլար, իսկ 2024 թվականի 9 ամիսներին՝ 682 միլիոն դոլար: Ավելին՝ բանկը հայտարարել է American Express-ի հետ համագործակցության ընդլայնման մասին:**

Եռամյա կորպորատիվ պարտատոմսերի գների ինդեքսն աճել է 0,1%-ով՝ փոքր-ինչ շտկվելով օգոստոսի վերջից ի վեր առավելագույնին հասնելուց հետո: Ընդհանուր առմամբ, ինդեքսի փոփոխությունները կրիտիկական չեն, եւ աճի միտումը պայմանավորված է դրամավարկային քաղաքականության մեղմացման ցիկլով՝ տնտեսությունում տոկոսադրույքների նվազմամբ: Մյուս կողմից, դրամ/դոլար փոխարժեքը մնում է կայուն՝ որոշակիորեն ամրապնդվելով (0,5%-ով) տվյալ ժամանակահատվածում, չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում ԱՄՆ դոլարը ամրապնդվել է աշխարհի հիմնական արժույթների նկատմամբ. DXY ինդեքսն աճել է 2,2%-ով: Այս դինամիկան վկայում է երկրի արժույթի հարաբերական կայունության մասին, սակայն նոր նախագահ Դոնալդ Թրամփի քաղաքական կուրսի իրականացման արդյունքում ապագայում ԱՄՆ դոլարի հնարավոր ամրապնդումը կարող է որոշակի ճնշում գործադրել դրամի վրա:

*Տնտեսական նորություններ*

2024 թվականի նոյեմբերի 4-ից նոյեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի վիճակագրական կոմիտեն հրապարակել է տվյալներ մայրաքաղաքում շինարարության ծավալների, ինչպես նաեւ երկրում անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների թվի վերաբերյալ: Տվյալներն ազդարարում են անշարժ գույքի ոլորտում այս պահին առաջարկի եւ պահանջարկի կայուն հավասարակշռության մասին, ինչը, իր հերթին, որոշակի ճնշում է գործադրում ֆինանսական հատվածում ներդրումային ակտիվության վրա: ԱՄՀ-ի ակնկալիքները երկրում գնաճի վերաբերյալ նույնպես վերանայվել են դեպի նվազ:

- Սեպտեմբերին Երեւանում շինարարության ծավալների աճը տարեկան կտրվածքով կազմել է 16.5%: 2024 թվականի 9 ամիսների ընթացքում աճը կազմել է 15,9% տարեկան կտրվածքով: Ընդհանուր առմամբ, շինարարական ակտիվության աճը ակնկալվում էր կարճաժամկետ ճնշման գործոնների բացակայության պայմաններում, սակայն երկարաժամկետ հեռանկարում հիփոթեքային վարկերի պետական աջակցության ծրագրի լուծարումը (մայրաքաղաքում 2025 թվականի սկզբից) ապագայում կարող է որոշակիորեն թուլացնել երկրի անշարժ գույքի գործունեությունը:

- Հանրապետությունում անշարժ գույքի առքուվաճառքի գործարքների թիվը մեկ ամսվա ընթացքում փոքր-ինչ նվազել է՝ 3,9%-ով եւ կազմել 4643 գործարք, սակայն զգալիորեն ավելի (26,7%-ով) նախորդ տարվա համեմատ: Տվյալները վկայում են անշարժ գույքի շուկայում շարունակվող բարձր պահանջարկի մասին, ինչը, մեր կարծիքով, որոշակի ճնշում է գործադրում երկրում ֆինանսական գործիքների նկատմամբ ներդրումային հետաքրքրության վրա:

- Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) Հայաստանում գնաճի կանխատեսումը իջեցրել է մինչեւ 0,2% (նախկին 3,1% արժեքի դիմաց 2024թ.-ին եւ մինչեւ 3,1%՝ 2025թ.-ի 3,7%-ից: 2024 թվականի տնտեսական աճի ակնկալիքները 6,0 տոկոս են, իսկ 2025 թվականի համար՝ 4,9 տոկոս: Հայաստանի Կենտրոնական բանկն ակնկալում է, որ 2024 թվականին գնաճը կմոտենա 2,0 տոկոսի, իսկ 2025 թվականին կհասնի 4,0 տոկոսի:

*AMX.am*

## ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿԸ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ Է ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

«ՎՏԲ-Հայաստան» բանկը նվազեցրել է փոքր բիզնեսի վարկերի տոկոսադրույքները մինչեւ տարեկան 3%՝ առաջին 90 օրվա համար: Պայմանները հասանելի են «Նոր գործընկեր» եւ «Էքսպրես» պրոդուկտների շրջանակներում՝ մանրածախ առեւտրի, արտադրության եւ սպասարկման ոլորտի ձեռնարկությունների համար: Ֆինանսավորումը կարելի է ուղղել ընթացիկ գործունեությանը, վարկերի մարմանը եւ ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Դրական վարկային պատմություն եւ այլ բանկում գործող վարկ ունեցող փոքր բիզնեսը կարող է օգտվել «Նոր գործընկեր» վարկից: Առաջին 90 օրվա համար տարեկան տոկոսադրույքը կազմում է 3%, հետագայում այն բարձրանում է մինչեւ 18% (փաստացի տոկոսադրույք՝ 17,25%): Առավելագույն գումարը 5 մլն ՀՀ դրամ է, ժամկետը՝ 48 ամիս:

«Էքսպրես» վարկը տրվում է առանց գրավի կամ մասնակի ապահովվածությամբ՝ 12-60 ամիս ժամկետով, 500 հազարից մինչեւ 20 մլն ՀՀ դրամի չափով: Արտոնյալ ժամանակահատվածից հետո տոկոսադրույքը կկազմի տարեկան 10%-17% (փաստացի տոկոսադրույք՝ 15,05%-20,07%)՝ կախված գումարից եւ գրավից:

«Տարեվերջին բիզնեսի շատ ոլորտներում աճում է գործարար ակտիվությունը, եւ մենք հատուկ առաջարկ ենք պատրաստել այն ձեռնարկատերերի համար, որոնք միջոցների կարիք ունեն շրջանառու միջոցները համալրելու, վարկերը մարելու կամ ներդրումային նախագծեր իրականացնելու համար: Մեզ համար կարեւոր է օգտակար լինել հաճախորդներին եւ նրանց տրամադրել անհրաժեշտ ֆինանսական գործիքներ եւ լուծումներ բիզնեսի հետագա զարգացման համար», - նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Եվգենի Մոտովիլովը:

Վարկի պայմաններին տեղեկանալ, ինչպես նաեւ հայտ ներկայացնել կարելի է բանկի կայքում, կամ երկրի տարածքում գտնվող ցանկացած մասնաճյուղում:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

# ՎԵՐԱԲԵՆԴԱՎՈՐԵԼ Է ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ. «ՖԱՍԹ ԲԱՆԿ»

«Ֆասթ» բանկը վերաբրենդավորել է Աբովյան քաղաքի Հանրապետության փողոց 1/72 հասցեում գտնվող մասնաճյուղը: Երկհարկանի սրահը համալրվել է տեխնիկական նոր սարքավորումներով եւ հարմարություններով, բանկը մեծացրել է սպասարկման աշխատակազմը:

«Ֆասթ»բանկի Աբովյան մասնաճյուղի կառավարիչ Հովհաննես Ալավերդյանն ասել է. «Ուրախ ենք, որ այսուհետ մեր հաճախորդներին սպասարկելու ենք վերաբրենդավորված սրահում՝ հագեցած ժամանակակից եւ հարմարավետ սպասարկում իրականացնելու համար անհրաժեշտ բոլոր պայմաններով: Հավատարիմ մնալով «Ֆասթ» բանկի որդեգրած քաղաքականությանը՝ աշխատելու ենք շուրջօրյա՝ բանկային բոլոր ծառայությունները մեր հաճախորդներին հասանելի դարձնելով ցանկացած վայրից եւ ցանկացած պահին»:

Հիշեցնենք, որ «Ֆասթ» բանկը թողարկել է իր առաջին բանկային՝ ԱԿՆՔարտերը, որոնք հասանելի են բանկի բոլոր մասնաճյուղերում: Բանկը գործակցում է ArCA, VISA եւ Master վճարահաշվարկային համակարգերի հետ: «Ֆասթ» բանկի ԱԿՆՔարտերը հնարավոր է ձեռք բերել ինչպես շուրջօրյա աշխատող բանկի մասնաճյուղերում, այնպես էլ «Ֆասթ» բանկի հավելվածի միջոցով:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: Ֆասթ բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

*●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ՄՇԱԿՈՒՅԹ

### ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՅՈՒՆԻՍԵՖ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

# ԿՐԹԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ընդունել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի վաղ մանկական զարգացման գծով խորհրդական Իվելինա Բորիսովային եւ ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի դեռահասների եւ երիտասարդների զարգացման գծով մասնագետ Սիդա Սիլարովային:**

Հանդիպման առանցքում եղել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի՝ 2026-2030 թվականների գործունեության շրջանակի՝ առավելագույնս համապատասխանեցումը ԿԳՄՍՆ առաջնահերթություններին, մասնավորապես՝ վաղ մանկության զարգացման եւ երիտասարդական քաղաքականության ոլորտներում իրականացվող բարեփոխումներին:

Նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ողջունել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչներին եւ ընդգծել՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը ԿԳՄՍՆ կարեւորագույն գործընկերներից է, որի հետ սերտ համագործակցություն է ընթանում տարբեր ուղղություններով:

Արթուր Մարտիրոսյանը վստահություն է հայտնել՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը կշարունակի աջակցությունը նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելների տրամադրման ուղղությամբ՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա: Նախարարի տեղակալը համոզմունք է հայտնել՝ սա կնպաստի ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված թիրախների իրագործմանը:

Նախարարի տեղակալը նաեւ նշել է՝ շարունակվում է մինչեւ 2026 թվականը 500 մանկապարտեզի նորոգման, կառուցման ու վերակառուցման ՀՀ կառավարության ծրագիրը: Արթուր Մարտիրոսյանն ընդգծել է՝ բոլոր այն բնակավայրերում, որոնցում ապրում են մինչեւ 10 նախադպրոցական տարիքի երեխաներ, նախատեսվում է այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մոդելի կիրառում կամ տրանսպորտային ծառայության ապահովում՝ հարեւան բնակավայրում գործող մանկապարտեզ հաճախելու համար:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի վաղ մանկական զարգացման գծով խորհրդական Իվելինա Բորիսովան շեշտել է նախադպրոցական ոլորտում ներառական կրթության պատշաճ իրականացման, ինչպես նաեւ հոգեկան առողջությանը վերաբերող ծրագրերի ապահովման կարեւորությունը: Այս համատեքստում Իվելինա Բորիսովան ընդգծել է Հայաստանի դրական փորձն ու պատրաստակամություն հայտնել շարունակելու աջակցությունը մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացման ուղղությամբ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

### «ԻՄ ՄԱՀՎԱՆ ՕՐԸ ԿԻՋՆԻ ԼՌՈՒԹՅՈՒՆ...». ՉԱՐԵՆՑ. ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

**Հայ մեծանուն պոետ Եղիշե Չարենցը (իսկական անունը՝ Եղիշե Աբրահամի Սողոմոնյան), ծնվել է 1897թ. մարտի 25-ին Կարս քաղաքում՝ բազմազավակ հայի ընտանիքում:1908թ. Չարենցն ընդունվել է Կարսի վարժարան, ուր դպրոցական «Գարուն» ալմանախում հրատարակվել են նրա բանաստեղծությունները: Ստանալով հնգամյա կրթություն՝ արդեն ձեւավորվող պոետն իր գիտելիքները հարստացրել է անդադար կարդալու միջոցով: 1914թ. Կարսում լույս է տեսել գրողի «Չարենց» գրական կեղծանունով «Երեք երգ տխրադալուկ աղջկան» բանաստեղծությունների ժողովածուն:**

Ազգային ազատագրական պայքարն ու Առաջին Աշխարհամարտը Եղիշե Չարենցի մեջ սպանում են պատանեկան երազները: Նա կամավորական է գրվում եւ միանում Արեւմտյան Հայաստանը զավթիչներից ազատելու շտապող մարտիկներին: Այդ տարիներին նա ստեղծում է իր լավագույն գործերից մեկը՝ «Դանթեական առասպելը», որում նկարագրում էր 20-րդ դարասկզբի պատերազմի սարսափները:

1915թ. Եղիշե Չարենցը մեկնում է Մոսկվա՝ Շանյավսկու համալսարանում ուսումը շարունակելու նպատակով: 1919թ. վերադառնում է Երեւան եւ սկսում դասավանդել դպրոցում: Այդ տարի Թիֆլիսում լույս է տեսնում «Ամբոխները խելագարված» հանճարեղ պոեմը:

1921թ. Եղիշե Չարենցն ամուսնանում է Արփենիկ Տեր-Աստվածատրյանի հետ: Վերջինս ծանր հղիության հետեւանքով 1927թ. մահանում է: Կնոջ հիշատակին Չարենցը բազմաթիվ բանաստեղծություններ է գրել: 1931թ. նորից է ամուսնանում: Շատ չանցած կինը՝ Իզաբելլա Չարենցը, նրան դուստր է ծնում, որին Արփենիկ են կոչում, իսկ 1935թ. ծնվում է նրանց 2-րդ դուստրը՝ Անահիտը:

1936թ. հուլիս-օգոստոս ամիսներին սկսվում են հայ մտավորականության ձերբակալությունները: Եղիշե Չարենցին սեպտեմբերին տնային կալանքի են ենթարկում՝ մեղադրելով ահաբեկչության եւ ազգայնականության մեջ: Բոլոր գրախանութներից «վերացնում» են նրա գրքերը, իսկ նորերի հրատարակումը՝ դադարեցնում: Սկսվում են ճնշումները ընտանիքի հանդեպ: Որոշ ժամանակ անց բանաստեղծին ձերբակալում են եւ հակասովետական գործունեություն իրականացնելու շինծու մեղադրանք ներկայացնում: Շատ չանցած՝ 1937թ. նոյեմբերի 27-ին, Եղիշե Չարենցն իր մահկանացուն է կնքում երեւանյան բանտերից մեկի հիվանդանոցում: Ըստ պաշտոնական վարկածի՝ դիահերձումը փաստել է, որ մահվան պատճառը չափազանց տկարացած առողջական վիճակն է եղել, ինչի պատճառները եղել են բազմաթիվ հիվանդությունները, բանտային բռնաճնշումները:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

### ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՇԱՆՈՒՅՑՈՒՄ

Գ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է «Գեղարքունիք» ՋՕԸ-ի՝ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ազատ/40,0 հա/, Գեղամասար/40,0 հա/, Լուսակունք /77,0 հա/, Խաչաղբյուր /60,0 հա/, Կախակն /32,0 հա/ եւ Մեծ Մասրիկ /678,0 հա/ բնակավայրերի վարչական տարածքներում գյուղատնտեսական /ոռոգում/ նպատակով համապատասխանաբար՝ ստորերկրյա ջրային ռեսուրսից՝ 419.6 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին՝ ժամը 17:00-ից 18:00-ն, դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի դեկտեմբերի 3-ին՝ ժամը 16:00 -ին, հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*Շրջակա միջավայրի նախարարություն*

### ՄԱՐԶԱԿԱՆ

## ՈՐ ԹԻՄԸ ԴԱՐՁԱՎ ՉԵՄՊԻՈՆ

Բելառուսի առաջնության ավարտից 1 տուր առաջ Մինսկի Դինամոն դարձել է չեմպիոն: Նախավերջին տուրում մայրաքաղաքային թիմը 1-0 հաշվով հաղթել է ԲԱՏԷ-ին ու անհասանելի դարձել երկրորդ տեղում գտնվող «Նեմանի» համար:

«Դինամոն» վաստակել է 67 միավոր, իսկ «Նեմանը»՝ 62:

Մինսկը ներկայացնող ակումբը երկրորդ տարին անընդմեջ եւ պատմության մեջ 9-րդ անգամ դարձավ Բելառուսի չեմպիոն: Տիտղոսների քանակով առաջատարը ԲԱՏԷ-ն է՝ 15:

Հիշեցնենք, որ 2024-25 մրցաշրջանի Չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում «Դինամոն» պայքարից դուրս էր թողել Հայաստանի չեմպիոն «Փյունիկին»:

## 3 ՈՍԿԵ ՄԵԴԱԼ՝ ԱՌՑԱՆՑ ՄՐՑԱՇԱՐՈՒՄ

Հայաստանի առաջատար մարմնամարզիկները մեդալներ են նվաճել առցանց ձեւաչափով անցկացված Platinum League մրցաշարում:

2024թ. Փարիզի Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, աշխարհի չեմպիոն, Եվրոպայի առաջնությունների կրկնակի ոսկե մեդալակիր Արթուր Դավթյանը 14,487 միավորով ոսկե մեդալ է նվաճել հենացատկում:

Օղակների վրա 13,925 միավորով ոսկե մեդալակիր է դարձել Արթուր Ավետիսյանը, Փարիզի Օլիմպիական խաղերին մասնակցած Վահագն Դավթյանն էլ 6-րդ տեղն է գրավել՝ 12,700 միավորով:

Նժույգ թափեր վարժությունում երիտասարդների աշխարհի չեմպիոն Համլետ Մանուկյանը վաստակել է 14,575 միավոր եւ դարձել ոսկե մեդալակիր: Արծաթե մեդալն էլ բաժին է հասել Գագիկ Խաչիկյանին, որը վաստակել է 14,525 միավոր:

## MLS–Ի ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉԻ ԶՈՒՅԳԵՐԸ

LS-ի փլեյ-օֆֆում հայտնի են դարձել կիսաեզրափակչի զույգերը.

«Օռլանդո Սիթին» կմրցի «Նյու Յորք Ռեդ Բուլսի» հետ, իսկ «Լոս Անջելես Գելեքսին»-՝ «Սիեթլ Սաունդերսի»:

Քառորդ եզրափակչում «Լոս Անջելես Գելեքսին» տնային խաղում 6-2 հաշվով վստահ հաղթանակ էր տարել «Մինեսոտայի» նկատմամբ:

«Սիեթլ Սաունդերսը» հյուրընկալվելիս լրացուցիչ ժամանակում 2-1 հաշվով կամային հաղթանակ էր տարել «Լոս Անջելեսի» նկատմամբ:

«Նյու Յորք Ռեդ Բուլսը» մրցակցի դաշտում 2-0 հաշվով պարտության էր մատնել «Նյու Յորք Սիթիին»: «Օռլանդո Սիթին» էլ ընդունել էր «Ատլանտա Յունայթեդին» եւ հաղթել 1-0 հաշվով:

Կիսաեզրափակչի հանդիպումները կայանալու են դեկտեմբերի 1-ին:

● *Նոյեմբերի 29-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Օրնիֆլ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ է տեխնիկական կանոնակարգը:**

*Մկրտիչ Սաֆարյանը (36 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Տեխնիկական կանոնակարգը փաստաթուղթ է, որն ընդունվել է՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան կամ ՀՀ օրենքով կամ ՀՀ կառավարության որոշմամբ, որով սահմանվում են արտադրանքի բնութագրերի եւ (կամ) արտադրանքի հետ կապված գործընթացներին, արտադրական եղանակներին՝ ներառյալ կիրառվող վարչական դրույթներին ներկայացվող կատարման եւ կիրառման համար պարտադիր պահանջներ, ինչպես նաեւ արտադրանքի ներմուծման եւ շուկայահանման պայմաններ: Այն կարող է ներառել նաեւ արտադրանքի, գործընթացի կամ արտադրական եղանակի նկատմամբ կիրառվող հասկացություններ, պայմանանշաններ, փաթեթավորման, մակնշման եւ պիտակավորման պահանջներ, սանիտարական, բուսասանիտարական, անասնաբուժասանիտարական նորմեր, ինչպես նաեւ արտադրանքի գրանցման մասին պահանջներ:

*Շուկայի վերահսկողության տեսչական մարմին*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Փորձանմուշների կանխիկ գնում կատարելու համար անհրաժեշտ դրամական միջոցները գոյանում են Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով այդ նպատակի համար նախատեսված միջոցներից: Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված ստուգում իրականացնելու մասին հրամանի կամ հանձնարարագրի հիման վրա ստուգման իրականացման ընթացքում ստուգաթերթի համապատասխան հարցը պարզաբանելու նպատակով գնման ենթակա փորձանմուշների քանակի ու պահանջվող գումարի հաշվարկը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ղեկավարին փորձանմուշների գնման համար անհրաժեշտ դրամական միջոցների տրամադրումն ապահովելու նպատակով:

## ԿԱՐԳ

**ՀԱՐՑ. Ո՞r օբյեկտներն են ենթակա լիցենզավորման:**

*Մարինե Դանիելյան (47 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Լիցենզավորման ենթակա օբյեկտներն են բնակավայրերում կառուցվող 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող, մինչեւ երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տները, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտները, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունները եւ 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակները, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցները, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունները եւ 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունները: Վերոնշյալ օբյեկտների շինարարական աշխատանքները պետք է կատարվեն տնտեսական եղանակով, առանց լիցենզավորված կապալառուի եւ շինարարության որակի տեխնիկական հսկիչի ներգրավման:

*ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** ՀՀ լիցենզավորման մասին օրենքով սահմանվել եւ լիցենզավորման ենթակա տեսակների ցանկից հանվել են մի շարք օբյեկտների նկատմամբ լիցենզավորված կազմակերպությունների կողմից շինարարությունն իրականացնելու պահանջը, որոնց նկատմամբ կիրառվում է հսկողություն՝ համարելով դրանք չլիցենզավորված գործունեություն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Նոյեմբերի 27-ից սկսված ձյունը իսկական ձմեռ էր բերել: Թեպետ մայրաքաղաք Երեւանում ձյունը չծածկեց մայթերը, բայց մի շարք մարզերում՝ օրինակ Շիրակի Փոքրաշեն գյուղում, ինչպես տեսնում ենք լուսանկարից, իսկական ձյունաշատ ձմեռ էր:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | -2 - 6<br>+ 4 + 8 |
| Կոտայքի լեռներ | -1 - 5<br>+ 4 + 9 |
| Կոտայքի նախալեռներ | -1 + 3<br>+9 + 12 |
| Գեղարքունիք | - 3 - 7<br>+ 5 + 8 |
| Լոռի | -1 - 5<br>+10 + 13 |
| Տավուշ | - 2 + 3<br>+12 + 14 |
| Արագածոտնի լեռներ | - 2 - 6<br>+ 2 + 7 |
| Արագածոտնի նախալեռներ | -2 + 2<br>+ 8 + 13 |

| | |
|---|---|
| Արարատ | -1 + 2<br>+13 + 15 |
| Արմավիր | -2 + 2<br>+13 + 15 |
| Վայոց ձորի լեռներ | -1 + 2<br>+ 3 + 6 |
| Վայոց ձորի նախալեռներ | -1 + 2<br>+12 + 14 |
| Սյունիքի հովիտներ | -1 + 5<br>+ 8 + 12 |
| Սյունիքի նախալեռներ | +1 + 5<br>+12 + 16 |
| ԼՂՀ | 0 + 4<br>+11 + 14 |
| Երեւան | + 6 + 8<br>+ 11 + 13 |

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.11.2024**
Տպաքանակ՝ 3968
*Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21*

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*